



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄ  
ԲԱՆԱԿՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«26» 09 2018թ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՀԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 81

Զեռնարկող՝

«ՀԱՐՀԱՆՔ» ՍՊԸ

Արագածոտնի մարզ, գ. Ուջան 2-րդ փող, տուն 24

Գործունեությունը՝

Ուջանի պիրոկլասվիկ գույֆերի հանքավայրի օգտակար  
հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի  
վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
Արագածոտնի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի ժ/պ՝



Ռ. Ոսկանյան

Առջիր եզրակացությունը՝ 5 թերթ

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆԻԱԿԱՆ ԵՀՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՇԽԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 81

<26> 09 2018 p.

**Ուզանի պիրոկլասդիկ գրուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի  
արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվեդումը**

ՀԵՂՈՒՄՆԵՐԸ

«ՀԱՐՀԱՆՔ» ՄՊԸ

## Ներկայացված նյութեր՝

Ծրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվետվություն  
/Ա կատեգորիա/

Տեղադրման վայրը՝

Արագածոտնի մարզ, Ութան և Կոշ համայնքներ

Ուզանի պիրոկլաստիկ տուֆերի հանքավայրը գտնվում է Արագածոտնի մարզում, Արագած լեռան հարավային լանջին, Ուզան և Կոշ համայնքների վարչական սահմաններում, բնակավայրերից համապատասխանաբար՝ 2.5կմ և 3.5կմ հեռավորությունների վրա: Հանքավայրից մոտ 250մ դեպի հյուսիս ուղղությամբ անցնում է Մ1 միջադետական նշանակության ավտոճանապարհը: Հանքավայրը տեղադրված է 1060-1090մ բացարձակ բարձրությունների վրա: Հանքավայրի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության՝  $40^{\circ}16' 45''$  և արևելյան երկայնության՝  $44^{\circ}11' 20''$ :

Արագածոտնի մարզի Ուժանի տուֆի հանքավայրը նախկինում շահագործվել է, հանքավայրում առկա են բացահանքեր՝ բացված հանքաստիճաններով: <<ՔԱՐՀԱՆՔ>> ՍՊ ընկերությունը նախատեսում է մնացորդային պաշարների արդյունահանում, բացահանքի ընդլայնում: Ընդլայնման աշխատանքներն իրականացվելու են շահագործված բացահանքի խորությամբ: Գործունեության ենթակա տարածքի հողերը ընդերքօգտագործման նպատակային նշանակության են: Որպես լցակույտեր օգտագործվելու են նախկին բացահանքի համար օգտագործված տարածքները: Փաստացի բացահանքի արտադրական իրապարակն իր անհրաժեշտ կառուցներով առություն ունի:

Հանքավայրի պաշարները ՀԽՍՀ Երկրաբանական վարչության ՊՏԸՇԻ կողմէց, 1966թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 150 արձանագրությամբ հաստատվել են հետևյալ քանակներով՝ A-526 հազ.մ<sup>3</sup>, B-1075հազ.մ<sup>3</sup>, C-3400հազ.մ<sup>3</sup>, A+B+C 5001.0հազ.մ<sup>3</sup>. Տուֆի զանգվածից բնունենի երթ կազմում է 45.65%:

Բացահանքի համար տրամադրվող տեղամասում, որը գրադարձնում է 43.0հա մակերես, տուֆի մարզող մնացորդային պաշարների ծավալը կազմում էն 2015070մ<sup>3</sup>,

կորզվող պաշարներինը՝ 1872000մ³: Տարեկան արտադրողականությունը հաշվարկվել է 45000մ³ տուֆի զանգված՝ մարվող պաշար: Շահագործումը նախատեսված է կատարել 41.6 տարում: Գործունեության համար դիտարկվել են այլնտրանքային տարբերակներ, ընտրված տարբերակը հիմնավորվել է՝ ենթով շրջակա միջավայրի և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների ծավալից:

Հանքավայրի հարավային լանջերը բնութագրվում են մեծ թեքություններով, ուժեղ կտրտված էրոզիոն հովհանքներով և ձորակային ցանցով: Տարածքում ժամանակակից նստվածքները հանդիպում են փոքր հզորությամբ, կամ բացակայում են, տոփերը հիմնականում մերկանում են մակերեսում: Մակաբացման ապարները հիմնականում ավելանում են հանքավայրի իջվածքներում, հարավային մասում և ներկայացված են՝ ավազակավերով, կավաճաղով, մանրաքարերով:

Գործունեության ենթակա տարածքում բուսածածկը բացակայում է, հողերն աչքի են ընկնում քարքարոտությամբ, ենթարկվում են ջրային, մասամբ էլ քամու էրոզիայի: Տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքները և անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումը չեն հանգեցնի շրջակա տարածքների, սոցիալական միջավայրի, էկոհամակարգերի, կամ պատմամշակութային հուշարձանների վրա նոր բացասական ազդեցությունների առաջացմանը, քանի որ ընդլայնման աշխատանքների արդյունքում վերջիններիս համար անհրաժեշտ սանհիտարական գոտին պահպանվում է, կամ գտնվում են բացահանքից զգայի հեռավորության վրա:

Տեղամասում և հարակից տարածքներում շահագործական աշխատանքներին խոչընդոտող սողանքներ, տեկտոնական խախտումներ և այլ տիպի գեոդինամիկ երևույթներ չեն արձանագրվել:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- Ամենամեծ երկարություն՝ 1037մ
  - Ամենամեծ լայնություն՝ 535մ
  - Բացահանքի մշակման խորություն՝ մինչև 39.9մ
  - Օտարման մակերես՝ 43.0հա:

Ինչպես նախկինում, այնպես ներկա բացահանքում շահագործումն իրականացվելու է բաց լեռնային աշխատանքներով՝ առանց հորատապայթեցման եղանակի: Արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են ընդլայնական միակող ցածրաատիճանային մշակման համակարգով: Մակարացման ապարները և արտադրական թափոնները պահեստավորվում են նախկինում արդյունահանված բացահանքերի տարածքներ՝ ստեղծելով ներդին լցակուտառաջազում:

Քանի որ բացահանքն արդեն բացված է, հորիզոնների բնականոն շահագործման համար նախատեսվում է կատարել որոշ նախապատրաստական աշխատանքներ: Հորիզոնների բացումն իրականացվելու է գոյություն ունեցող մուտքային ճանապարհից՝ կապիտալ խրամների և պիոներական խրամի անցումով, CMP-026 մակնիշի քարիատ մեքենայի միջոցով: Հաջորդ հորիզոնները նախատեսվում է բացել մուտքային ավտոճանապարհից՝ կտրող խրամի միջոցով: Բացող և կտրող խրամների անցման ժամանակ հատված քարերի հեռացումը և բարձումը տրանսպորտային միջոցներ կատարվելու է ձեռքով՝ աշխատանքների փոքր ծավալի պատճառով: Ելնելով քարիատ մեքենայի տեխնիկական բնութագրից, հանքաստիճանի բարձրությունն ընդունվում է 0,42մ, իսկ աշխատանքային իրապարակի անհրաժեշտ լայնությունը՝ 14.2մ: Արդյունահանման աշխատանքները կատարվելու են մեխանիզացված՝ CMP-026 քարհան մեքենայի միջոցով: Ուղիղ կտրված քարերի տեղափոխումը հանքախորշից մինչև ճանապարհային վրա և կուտակումը դարսակույտերի մեջ կատարվում է ձեռքով: Արդյունահանված քարն իրազվելու է տեղում՝ սպառողի ավտոտրանսպորտում:

Հահագործման տարիներին, արդյունահանման աշխատանքներից առաջացող մակարացման ապարները և արտադրական թափոնները պահեստավորվում են նախկինում արդյունահանված տարածքներում ստեղծելով ներքին լցակույտ: Լցակույտառաջացումն իրականացվելու է բուլղոզերային եղանակով: Ուղիղ կտրվածքի քարերի արդյունահանման ժամանակ աշխատանքային հանքաստիճաններում կառաջանա՝  $24560\text{m}^3/\text{տարի}$ , կամ  $94.46\text{m}^3/\text{հերթ}$  ծավալով արտադրական թափոններ, որոնք բուլղոզերով տեղափոխվում են  $5-10\text{մ}$  հեռավորության վրա և կուտակվում: Իսկ  $185000\text{m}^3$  ընդհանուր ծավալով մակարացման ապարներներն ավտոինքնաթափով կտեղափոխվեն բացահանքի նախկին մշակված, արդյունահանված տարածքներ՝ ստեղծելով ներքին լցակույտ: Այդ թափոնների տեղափոխման միջին հեռավորությունը կկազմի  $0.5$  կմ: Օգտակար հանածոյի արդյունահանումից հետո իրականացվելու է բացահանքի խախտված հողերի (ներքին լցակույտերի տարածք) վերականգնում: Թափոնների տեղափոխման և կուտակված թափոնների հարթեցման աշխատանքները կիրականացվեն միաշերեք անհվային բարձիչով և ավտոինքնաթափով:

Բացահանքի շահագործման ընթացքում ջրօգտագործումը նախատեսված է արդյունաբերական և խմելու նպատակներով: Տեխնիկական ջրամատակարարումը նախատեսված է քարի կտրման աշխատանքների ժամանակ փոշեկանիման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրանման նպատակով: Բացահանքում աշխատողների տնտեսակենցաղային կարիքների համար ջրի ծախսը հաշվարկվել է  $137.8 \text{м}^3/\text{տարի}$ , կամ  $0.53 \text{м}^3$  միջին օրեկան: Իսկ ընդհանուր՝  $9800 \text{м}^2$  ջրանվող մակերեսների փոշենստեցման համար ջրի ծախսը հաշվարկվել է օրեկան  $4900 \text{լիտր}$ , կամ  $882 \text{м}^3/\text{տարի}$ : Արդյունաբերական հրապարակ խմելու ջուրը բերվելու է կցովի ջրի ցիստենով, իսկ փոշենստեցման նպատակով տեխնիկական ջուրը բերվելու է KO-002 ջրան-լվացող ավտոմեքենայով: Կենցաղային կեղտաջրերը  $0.5 \text{м}^3$  օրեկան ծավալով լցվելու է  $25 \text{м}^3$  տարողությամբ անջրաթափանց հոր, որտեղից սահմանված կարգով պետք է հոռացվի:

Բացահանքում ջրահեռացման միջոցառումներ չեն նախատեսվում, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, անմիջապես քարհանքի տարածք թափվող անձրևային ջրերը կարող են ինքնահոս կերպով հեռացվել կամ ներծծվել ապարների ճաքերի միջով։ Էցակույտի և բացահանքի ցածրադիր նիշում, հնարավոր արտահոսքերի համար նախատեսվում է հոր-պարզաբան։

Հանքաքարի արդյունահանման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են.

- հանքաքարի արդյունահանման, կտրման, բարձման, տեղափոխման ժամանակ, ինչպես նաև ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժից առաջացող փոշու արտանետումները,

- տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի արդյունքում առաջացող աղմուկը,

- Երթևեկության ավելացման հետ կապված, բնակչությանը պատճառած անհանգստությունը, կամ հանքավայրում աշխատողների աշխատանքի անվտանգությունը:

Հանքավայրի շահագործման ընթացքում նշված վնասակար ազդեցությունները կանխելու, կամ նվազեցնելու նպատակով նախագծում նախատեսվել են բնապահպանական միջոցառումներ, այդ թվում՝

- մեթենաների վրա զտիչ սարքերի տեղադրում, մթնոլորտային օդը աղտօնումից գերծ պահելու նպատակով,



- աշխատանքային հրապարակների, հանքախորշերի, լցակույտերի, ավտոճանապարհների պարբերաբար ջրում՝ տարվա չոր և շոգ եղանակներին փոշեառաջացման կանխման նպատակով,

- նավթամթերքների պահեստավորում բացահանքի արտադրական հրապարակում, հատուկ հատկացված տեղում՝ բացառելով արտահոսքերը շրջակա տարածքներ,

- ժամանակացույցին համապատասխան երթևեկության կանոնակարգում և անհրաժեշտ վայրերում համապատասխան ցուցանակների տեղադրում՝ հնարավոր ազդեցություններից խուսափելու համար,

- բացահանքում աշխատողների անվտանգության համար անհրաժեշտ պայմանների և միջոցների ապահովում:

Ենելով հանքավայրի լեռնաերկրաբանական պայմաններից նախատեսվում է լցակույտ առաջացնող ապարները կուտակել ներքին լցակույտում, ինչը հողերի վրա լրացուցիչ ազդեցություն չի ենթադրում: Լցակույտի հարթակի նիշն ընդունվում է բացահանքի հատակի նիշը: Հողածածկի պահպանության հիմնական միջոցառում է հանդիսանում խախտված հողերի ռեկուլտիվացման աշխատանքները, որոնք իրականացվելու են շահագործման աշխատանքների ավարտից և պաշարների մարումից հետո: Ընդամենը խախտվող հողերի մակերեսը կկազմի՝ 43.0հա, որից ռեկուլտիվացիայի ենթակա լցակույտի տարածքը կկազմի 39.3հա:

Տեխնիկական վերականգնման աշխատանքները ներառում են՝ բոլդոգերի օգնությամբ ներքին լցակույտում կուտակված մակարացման ապարների և արտադրական թափոնների (համապատասխանաբար՝ 11400մ<sup>2</sup> և 53700մ<sup>2</sup> մակերեսներում) փոռում և հարթեցում մշակված տարածքում: Հարթեցումը կկատարվի հանքավայրի հորիզոնների ողջ մակերեսով (393000մ<sup>2</sup> կամ 39.3հա): Իսկ հետագա կենսաբանական վերականգնումն ապահովելու համար հարթեցված մակերևույթի վրա կատեղծվի բուական ծածկ: Ռեկուլտիվացիայի իրականացման համար անհրաժեշտ գումարը ըստ նախնական հաշվարկների գնահատվել է՝ 4 մլն. 15 հազ. ՀՀ դրամ: Հետագայում, ռերակուլտիվացիայի և հանքի փակման նախագծման ընթացքում կնախատեսվեն մանրամասն հետազոտություններ և կմշակվեն համապատասխան միջոցառումներ:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսանկյունից տարբեր վտանգավորության թափոններ, ինչպես օրինակ՝ մեքենաներում օգտագործված, փոփոխված յուղեր, քայուղեր, անվաղողեր, որոնք վաճառվելու, կամ հանձնվելու են նման թափոնների գործածության լիցենզիա ունեցող կազմակերպությունների: Կենցաղային աղբի և տարբեր տեսակի թափոնների համար համապատասխան վայրերում նախատեսված է աղբարկեր, կամ տարողություններ: Հանքավայրի շահագործման ընթացքում առաջանում են ընդերքօգտագործման թափոններ, որոնք չեն դասվում վտանգավոր թափոնների շարքին: Բոլոր թափոնների կառավարման միջոցառումների համար նախատեսվել են միջոցառումներ և ծախսեր:

ԾՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են հնարավոր վթարային և արտակարգ իրավիճակների դեպքում ազդեցությունների նվազեցմանը: Բոլոր նախատեսվող միջոցառումները (նախապատրաստական, հանքավայրի շահագործման և փակման փուլերի համար) ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում: Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների (օդ, ջուր, հող) որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ, որոնց գործողությունների իրականացման համար նախատեսվել են ծախսեր:

Նախնական գնահատման հայտի և հաշվետվության փորձաքննության փուլերում հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արագածոտնի մարզի Ուժան և Կոշ համայնքներում անցկացվել են

հանրային քննարկումներ, որոնց ընթացքում մասնակիցների կողմից հավանության է արժանացել նախատեսվող գործունեության իրականացումը:

Ամփոփելով գնահատման և փորձաքննության արդյունքները, պետք է նշել, որ նախագիծը մշակվել է բնապահպանական և ընդերքօգտագործման ոլորտները կարգավորող << օրենսդրական պահանջներին և նորմատիվահրավակական ակտերին համապատասխան: >> Հանքավայրի շահագործման ընթացքում թույլատրելի նորմերը գերազանցող արտանետումներ և արտահոսքեր չեն առաջանա և լրացնուիչ բնապահպանական ծանրաբեռնվածություն չի լինի, քանի որ տարածքներն արդեն իսկ օգտագործվում են ընդերքօգտագործման նպատակով: Առաջարկվող տեխնոլոգիական լուծումների և հաշվետվությունում ներկայացված բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մեջմացման միջոցառումների իրականացման արդյունքում աղոտուվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Գործունեության ընթացքում անհրաժեշտ է ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մոնիթորինգի պլանում առաջարկվող միջոցառումների և մոնիթորինգային դիտարկումների իրականացումը և ժամանակացուցերը (նախապատրաստական, շահագործման և փակման փուլերում), որոնց արդյունքները պետք է հասանելի լինեն պետական շահագործի մարմիններին և հանրությանը:

- Գործունեության իրականացման ընթացքում (նախապատրաստական փուլ, հանածոյի արդյունահանում) ջրօգտագործումը և ջրահեռացումն անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Շահագործման ընթացքում առաջացող տարրեր տեսակի թափոնների հավաքումը և հեռացումը (այդ թվում վտանգավոր թափոններ՝ յուղեր, քսայուղեր, անվադողեր և այլն) անհրաժեշտ է իրականացնել << օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՔԱՐՀԱՆՔ>> ՍՊԸ կողմից ներկայացված Արագածոտնի մարզի Ուշանի պիրոկաստիկ տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեսակարգություն



Ա. Դոնոյան

Գլխ. մասնագետ

Հ. Մկրտչյան